ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԻԿՈՂԱՈՍ ԱԴՈՆՑ, «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ։ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ» (ՌՈՒՍ ԹԱՐԳՄ. Ա. Թ. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ ԵՒ Է. Հ. ԽՈՆԴԿԱՐԵԱՆ). — «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ, ԵՐԵՒԱՆ, 1987 թ. (639 էջ).

1987 թ. Երեւանում առաջին անգամ հայերէն թարգմանութեամբ լոյս է ընծայւում անուանի գիտնական Ն. Ադոնցի «Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում» մենագրութիւնը, որն իր ամբողջութեամբ հայ պատմագրութեան մէջ տակաւին պահպանում է իր գիտական արժէքը։

Հարուստ է Ն. Ադոնցի պատմագիտական ժառանգութիւնը։

Լայն են բազմավաստակ պատմաբանի՝ իբրեւ հայագէտի, բիւզանդագէտի ստեղծագործական սահմանները՝ Հայաստանի հնագոյն, վաղ միջնադարի պատմութիւն եւ միջնադարեան գրականութիւն, Հայ-Բիւզանդական յարաբերութիւններ, հայ գիւղացիութեան պատմութիւն։

Ն. Ադոնցի վերոյիշեալ աշխատութիւնը իր գիտական արժէքով երկարակեաց է։

Ուսումնասիրութեան արժէքները ակնյայտ են։

Օգտագործուած նիւթերի նկատմամբ դրսեւորուել է հեղինակի պատմա-քննական մօտեցումը եւ եզրակացութիւնների ինքնուրոյնութիւնը։ Եզրակացութիւններ, որոնք մինչեւ հիմա պահպանում են իրենց թարմութիւնը հայ պատմագրութեան մէջ։

Պատմա-քաղաքական երեւոյթները եւ իրադարձութիւնները ներկայացուած են խոր գիտական դատողութիւններով եւ եզրայանգումներով։

ՀՍՍՀ Գ. Ա. Ակադեմիկոս Գ. Խ. Սարգսեանը վերոյիշեալ մենագրութիւնը «յիրաւի» համարում է Ն. Ադոնցի «Գլուխ գործոցը»։

Լայն է աշխատութեան բովանդակութիւնը։ Այն ունի երեք գլխաւոր բաժիններ եւ նախաբան։

Հրատարակուած աշխատութեան վերջում կցուած է մենագրութեանը նուիրուած ՀՍՍՀ Գ. Ա. Ակադեմիկոս Գ. Խ. Սարգսեանի տեսութիւնը՝ «Նիկողայոս Ադոնցի գլուխգործոցը» խորագրով։

Գրքի առաջին բաժինը, որը կոչւում է «Արեւմտեան Հայաստան», նուիրուած է Հռոմէական տիրապետութեան տակ անցած հայ-

կական տարածքների մանրակրկիտ ուսումնասիրութեանը՝ «սկսած 387թ. բաժանումից»:

Այս ծաւալուն բաժնում, Ադոնցը հետազօտել է Հռոմէական կայսրութեան միացած այդ տարածքի երեք առանձին մասերը՝ Մոփքը, Ներքին Հայքը (Armenia interior) եւ Փոքր Հայքը (Armenia minor):

Այս նոյն բաժնի մէջ Ադոնց մի առանձին գլուխ է նուիրել Յուստինիանոս Կայսրի (527–565 թ.թ.) կայսրութեան ենթակայ Հայաստանում իրականացրած բարենորոգումների մասին:

Հեղինակը այստեղ մանրազնին լուսաբանում է այդ բարենորոգումների պատճառները, էութիւնը եւ նրանց զանազան հետեւանքներն ու նշանակութիւնը Հայաստանի համար:

Գիտական մեծ արժէք է ներկայացնում այս բաժնի 7րդ գլուխը, որը վերնագրուած է «Հայաստանի քաղաքացիական վերակազմութիւնը»:

536 թ. հրապարակուած քաղաքացիական վերակազմութեան օրէնսդրութեամբ, Բիւզանդիային ենթակայ Հայաստանի հողերը ենթարկուեցին վերակազմութեան: Կազմուեց չորս նոր վարչական միաւոր՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք, Չորրորդ Հայք:

Այստեղ շահեկանն այն է, որ գիտնականը ճշգրտում է այդ վերոյիշեալ չորս վարչական միաւորների սահմանները:

Ադոնցի «Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում» մենագրութեան երկրորդ դրուագը նուիրուած է «Արեւելեան Հայաստան»-ին, որի տակ հեղինակը նկատի ունի 387 թ. բաժանումից յետոյ Սասանեան Պարսկաստանին անցած Հայաստանի տարածքային մասը:

Առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում մենագրութեան այս բաժնի «Նախարարութիւնների քանակական վերլուծութիւնը» ենթաբաժինը, ուր հեղինակը, հարուստ նիւթերի օգտագործմամբ, պատմագրական արժէքաւոր տեղեկութիւններ է տալիս վաղ միջնադարում գոյութիւն ունեցած հայ նախարարութիւնների քանակի եւ անուանական կազմի մասին:

Գիտական լուրջ արժէք է ներկայացնում այս բաժնի «Նախարարութիւնների տերիտորիալ վերլուծութիւնը» խորագիրը կրող ենթաբաժինը:

Արժէքաւորը հեղինակի այն ընդգծումն է, որ «Հայոց աշխարհը իր սահմաններով, ուր գործում էր նախարարական վարչակարգը, ներկայացնում էր ինքնուրոյն հողային միաւորների, իշխանական առանձին տիրոյթների մի ամբողջ ցանց» (էջ 331):

Ներկայացնելով նախարարութիւնը որպէս հողային միաւոր, պատմաբանը տալիս է նախարարութիւնների զարգացման ընթացքը եւ նրանց տեղադրութիւնը։

Ուշագրաւ է նաեւ մենագրութեան այս մասի վերջին գլուխը «Նախարարութիւնը եւ հոգեւոր իշխանութիւնը» վերնագրով, որտեղ հեղինակը լուսաբանում է հայ եկեղեցու ծագման, ընկերային, քաղաքական դերի եւ նշանակութեան հարցերը։

Գրքի վերջին դրուագը կրում է «Նախարարութեան ծագումը» խորագիրը։

Այս մասում Ն. Ադոնցը մեկնաբանում է հայ ժողովրդի ծագման եւ կազմաւորման հարցը։

Այստեղ գնահատելին այն է, որ մեծանուն գիտնականը, երբ տակաւին գիտական ասպարէզի վրայ չէին այս հարցի հետ առնչուող սեպագիր՝ խեթական, ասորական եւ ուրարտական արձանագրութիւնների հարուստ փաստական նիւթերը, եկաւ այն եզրայանգման, որ հայ ժողովուրդը կազմաւորուել է հայկական լեռնաշխարհում, այսինքն, այն տարածքում ուր հետագային իր դարաւոր պատմութիւնը կերտեց այդ հանճարեղ ժողովուրդը։ Ուսումնասիրութիւնում «գիտական վերլուծութեան ենթակ։ւած են հայկական աւատատիրութեան, հայ գիւղացիութեան հարցերը»։

Այսպիսով, Ն. Ադոնցի մենագրութիւնը վկայելով պատմագէտի վաստակի մասին, ճանաչողական արժէք է ներկայացնում եւ ծանրակշիռ մի ներդրում է հայ պատմագիտութեան մէջ։

Ա. Հ. ԹՈՓԱԼԵԱՆ